# 2012-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ...

### Հարցազրույց քաղաքական վերլուծաբան, ՌԱՀԿ փորձագետ Էդգար Վարդանյանի հետ

## Հասարակությունն այսօր փնտրտուքի մեջ է... Նրան այլեւս չեն ոգեւորում գոյություն ունեցող ընդդիմադիր քաղաքական ձեւաչափերը

**-Պարո՛ն Վարդանյան, 2012-ն ընտրական տարի է՝ առաջինը 2008-ի ընտրությունների դաժան փորձից հետո: Ըստ Ձեզ, այս տարիներն ու նախորդ ընտրությունների փորձը ի՞նչ են տվել հասարակությանն ու իշխանություններին կամ ի՞նչ են փոխել նրանց մեջ:**

-Նախ՝ պետք է նշել, որ հասարակությունը, կարծես, շատ ավելի խստապահանջ է դարձել քաղաքական դաշտում գործող բոլոր սուբյեկտների հանդեպ: Երևում է նաև, որ խորանում է վերջիններիս նկատմամբ ընդհանուր անվստահությունը:

2008-ին մարդիկ ևս մեկ անգամ առիթ ունեցան համոզվելու, որ ներկա վարչակարգի պայմաններում ընտրական գործընթացները վերածվում են իշխանությունն ամեն գնով պահելու միջոցառման: Հասարակությունը այս տարիների ընթացքում տեսավ, որ իշխանությունները, թեև պատրաստ են հասարակությանը որոշակի զիջումներ անելու, բայց ցանկություն չունեն իրականացնել վարչակարգի փոփոխությանը նպաստող որևէ գործողություն:

Իշխանությունները, իհարկե, հասկացել են, որ 2008-ի մթնոլորտի առկայության դեպքում հնարավոր չի լինի խուսափել քաղաքական ճգնաժամից, և որ այդ դեպքում իրենց համար չափազանց դժվար է լինելու մնալ երկրի ղեկին: Սակայն այսօր նրանք կատարում են միայն որոշակի կոսմետիկ բարեփոխումներ, որոնք ընդամենը կարող են ժամանակավորապես քողարկել քաղաքական համակարգի արատները, ոչ ավելին:

Հասարակությունն էլ, իմ կարծիքով, այժմ փնտրտուքի մեջ է: Նրան, կարծես թե, այդքան էլ չեն ոգևորում գոյություն ունեցող ընդդիմադիր քաղաքական ձևաչափերը, բայց նա դեռևս չգիտի, թե ինչով փոխարինել դրանք: Ճիշտ է, այսօր ակտիվ քաղաքացիների որոշակի շերտեր ներգրավվում են տարբեր տեսակի քաղաքացիական նախաձեռնություններում, սոցիալական ցանցերում ընթանում են հասարակական, քաղաքական խնդիրների վերաբերյալ թեժ բանավեճեր, սակայն արդեն հավերժ դարձած հարցերից մեկի՝ ինչպես փոխել համակարգը, պատասխանը դեռևս չի գտնվել:

**- Արդյո՞ք այսօր իշխանությունները պատրաստ են կամ կգնան արդար ընտրությունների:**

- Կարող եմ ասել, որ համենայն դեպս այսօր ես չեմ տեսնում իշխանությունների՝ արդար ընտրություններ անցկացնելու կամքի նախադրյալներ: Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու պատրաստակամության վերաբերյալ իշխանությունների հայտարարությունները պետք է արտահայտվեն կոնկրետ գործերով, իսկ այդպիսիք բացակայում են: Տեսեք, 2008-ի ընտրություններից հետո հասարակությունը կասկածի տակ դրեց ընտրությունների արդյունքները և դուրս եկավ փողոց: Չմոռանանք, որ այդ ընտրությունների արդյունքները չընդունվեցին նույնիսկ ներկայում իշ-

Արդյունաբերական, շարժիչային որակյալ յուղեր՝ Եվրոպայի առաջատար արտադրողներից:
«Նակոյլ» ՍՊԸ, ք. Երևան, Սեբաստիա փ. 141/1, հեռ.՝ 771190, ֆաքս՝ 771192, URL: www.nakoil.am

# Ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու պատրաստակամության վերաբերյալ իշխանությունների հայտարարությունները պետք է արտահայտվեն կոնկրետ գործերով

խանական կոալիցիայի մաս կազմող «Օրինաց երկրի» կողմից՝ նրա ստորագրությունը բացակայում է ընտրությունների արդյունքներն ամփոփող արձանագրության տակ: Այն, որ ընտրություններն արդար չէին, վերջերս խոստովանեց այդ ընտրությունների ժամանակ արտգործնախարար աշխատած Վարդան Օսկանյանը: Եվ նման գնահատականի արժանացած ընտրություններից հետո արտահերթ ընտրություններ չեն նշանակվել, ընտրակեղծարարները չեն պատժվել, իսկ ընտրությունների հետևանքով տեղի ունեցած մարտի 1-ի զոհերի մեղավորներն էլ չեն բացահայտվել: Եթե մեկը նախկինում գործած իր մեղքը չի ընդունել և դրա հետևանքները չի վերացրել, ապա ոչ մի հիմնավորում չկա հավատալ նրա խոսքերին:

Ընտրությունների մասին խոսելիս՝ ցանկանում եմ ուշադրություն դարձնել ևս մի հանգամանքի վրա: Շատ հաճախ, երբ ասում են ընտրություններ, նկատի են ունենում հիմնականում քվեարկության գործընթացը: Սակայն քվեարկությունն ընդամենը ընտրությունների մի մասն է: Հնարավոր է, որ այս անգամ քվեարկությունն անցնի համեմատաբար մաքուր, քան նախկինում էր: Բայց, օրինակ, հենց այսօր մենք տեսնում ենք, որ ընտրությունների նախաշեմին հեռուստաընկերությունները զբաղված են իշխանությունների գովաբանությամբ և համարժեք կերպով չեն անդրադառնում հասարակության հիմնախնդիրներին: Կա կողմնակալ մոտեցում իշխանություններին սուր քննադատող քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների և այլոց նկատմամբ: Սա նշանակում է, որ հասարակությանը չեն ցանկանում հնարավորություն տալ օբյեկտիվ պատկեր ունենալ իրականության վերաբերյալ, փաստացի, ընտրությունների նախաշեմին արդեն անհավասար պայմաններ են ստեղծված: Իշխանությունները՝ շնորհիվ նախագահականից վերահսկվող հեռուստաընկերությունների վերոնշյալ քաղաքականության, մեծ առավելությամբ են մտնում ընտրապայքարի մեջ: Իսկ դա նշանակում է, որ արդար ընտրությունների սկզբունքներից մեկն արդեն իսկ ոտնահարված է:

**- Իսկ քաղաքացին պատրա՞ստ է պայքարելու իր ձայնի համար:**

- Քաղաքացիական առումով ակտիվ քաղաքացիների մտավորական զանգվածը՝ այո, պատրաստ է: Հասարակության մնացած հատվածների՝ պայքարելու պատրաստակամության մասին դժվարանում եմ ինչ-որ բան ասել: Սակայն, կրկնում եմ, որ ամեն դեպքում դեռևս չեն գտնվել պայքարելու արդյունավետ և հաջողության բերող մոդելներ:

**- Իբրև քաղաքական վերլուծաբան ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը լիակատար համամասնական ընտրակարգի անցնելու վերաբերյալ:**

- Նախ՝ պետք է նշել, որ յուրաքանչյուր ընտրակարգ ունի իր թերություններն ու առավելությունները: Լիակատար համամասնական ընտրակարգը լայնորեն կիրառվում է հիմնականում զարգացած եվրոպական երկրներում: Այդ ընտրակարգը պահանջում է կայացած կուսակցական համակարգի առկայություն: Իսկ մենք գիտենք, որ Հայաստանում չկա նորմալ կուսակցական համակարգ:

Մյուս կողմից՝ Հայաստանի ներկայիս ընտրական համակարգը մեծապես ձեռնտու է իշխանություններին և նպաստում է ստատուս քվոյի պահպանմանը: Եթե անցում կատարվեր լիակատար համամասնական ընտրակարգին, դա հնարավորություն կտար ընդդիմադիր ուժերին որոշակիորեն խոչընդոտել իշխանությունների PR ծրագրի իրականացմանը: Բանն այն է, որ վերջիններս ցանկանում են «մաքուր» պահել համամասնական ցուցակը օլիգարխներից՝ «ուղարկելով» նրանց մեծամասնական ընտրատարածքներ: Մեծամասնականով առաջադրվող պատգամավորի թեկնածուն կրկնակի ուժ է ներդնում ԱԺ ընտրությունների ժամանակ: Վերջինիս սատարող թիմը շահագործում է նրա անձնական ամբիցիաները՝ սեփական տարածքում «ընտրյալ» լինելու հնարավորություն տալու դիմաց նա պարտավորվում է ձայներ ապահովել համամասնական ընտրակարգով առաջադրվող իրեն պաշտպանող քաղաքական թիմի օգտին:

Ամեն դեպքում, միանշանակ է հետևյալը՝ ընտրակարգի փոփոխությունն ինքնին չի կարող ազատ և արդար ընտրություններ երաշխավորել:

**- Եթե փորձենք մոտավոր կանխատեսում անել, ապա ինչ համամասնությամբ կբաշխվեն պորտֆելներն ԱԺում իշխանությունների և ընդդիմության միջև:**

- Եթե հասարակությունը կարողանա իրական դեմոկրատական շարժում նախաձեռնել և քաղաքական դաշտում թելադրող դառնալ, եթե հասարակությունը կարողանա այնպես ինքնակազմակերպվել, որ հենց սկզբից, մինչև քվեարկությունը, նրան հաջողվի չեզոքացնել կեղծիքի մեխանիզմը, ապա ընդդիմադիր ուժերը, միասին վերցրած, բացարձակ մեծամասնություն կարող են ստանալ: Իսկ եթե հասարակությունը չկարողանա դա անել, ապա արդեն իշխանություններն են որոշելու, թե ով ինչքան ձայն կստանա: Այդ դեպքում ամենահավանականն այն է, որ իշխանություններն իրենց կթողնեն սահմանադրական մեծամասնության համար անհրաժեշտ նվազագույնը, իսկ մնացածը շռայլորեն «կշնորհեն» ընդդիմադիրներին՝ դրանով փորձելով «եվրոպական տեսք» տալ ընտրությունների արդյունքներին:

**Թեհմինա Արզումանյան**

Արդյունաբերական, շարժիչային որակյալ յուղեր՝ Եվրոպայի առաջատար արտադրողներից:
«Նակոյլ» ՍՊԸ, ք. Երևան, Սեբաստիա փ. 141/1, հեռ.՝ 771190, ֆաքս՝ 771192, URL: www.nakoil.am